ԱՍՔԱՆԱԶ-ՓԱՄԲԱԿԵՑԻ, «Սիրոյ Պօէզիա» Նմանողութիւն, Թիֆլիս. տպ. «Արօր», 1893 թ., էջ 76 գինն է 20 կոպ.։

Նոյնը, «Ով կարդա—նա մարդ ա»։ Թիֆլիս, տպ. Ռօտինեանցի, 1893 թ., էջ 32. գինն է 7 կոպ.։

Նոյնը, «Գաղափարական օրիորդ» վէպ, մաս Ա. Թիֆլիս տպ. «Արօր», 1893 թ., էջ 24, գինն է 10 կոպ.։

«Սիրոյ Պօէզիա» գրքոյկի մէջ ցոյց է տուած թէ ինչպէս դատարկամիտ երիտասարդի մէկը կարողանում է գրաւել մի ջահիլ կնոջ սիրտ ու միտքը, որին իր ամուսինը սիրում է ջերմեռանդ սրտով և որը առհասարակ մինչև այժմ բաւական է եղել իր գոհութեանը։ Բայց երիտասարդ Օհաննեանը, որը ուշընչով աւել չէ նորա ամուսնուց, միայն աւելի «ջահիլ» լինելով կարողանում է մոլորեցնել անփորձ տիկնոջը, մինչև որ վերջինս նորանից հղանում է։ Այս սիրահարուած տիկինը չ'կամենալով շարունակ խաբել իր իսկական ամուսնուն, առաջարկում է Օհաննեանին միասին անկախ կեանք սկսել, իսկ երիտասարդը մերժում է զանազան կողմնակի պատճառներ բերելով։ Տիկինը յուսահատում է և սկսում է լաւ մտածել իր դրութեան վերայ։ Նա զղջում է իր արածի համար, բայց արդէն ուշ է, նա հղի է։ Բայց և այնպէս հեռացնում է սիրահարին, ժամանակին ծնում է երեխան, որը իսկոյն մեռնում է և նա իր ամուսնու հետ շարունակում է ապրել, իսկ վերջինս ոչինչ չէ տեղեկանում անցածի մասին։

Վէպիկի կազմը բաւական տգեղ է։ Միայն նա ունի ուղիղ տենդենցիա, որը կայանում է հետևեալ խօսքերի մէջ, որով վերջանում է նա. «Գործունեայ և սիրելի Մարգարիտան տեսաւ կեանքի պղպջում նաև պայծառ ճառագայթներ. լինել օգտակար տնտեսուհի, ազնիւ հաւատարիմ կին, մտերիմ ընկեր ամուսնուն—և այս մի այնպիսի գաղափարական դրութիւն է, որ անմատչելի է այն էգոիստներին, որոնք ձգտում են անձնական բաղդաւորութեան, կործանելով և ոչնչացնելով ուրիշի կեանքը, երեակայելով կառուցանել ամպերի վրայ իրանց «սրբութեանց սրբոց» խորաններն և տաճարներն...»

«Ով կարդա—նա մարդ ա» փոքրիկ վէպիկ է։ Մի քանի գիւղական պատանիներ ուսանում են քաղաքում։ Այս ուսանողական տարւայ վերջին մի քանի ուսանողներ գըտնում են, թէ ուսուցիչների վերաբերմունքը դէպի իրանք անարդար է և կամենում են ընդհանուր բողոք յարուցանել դպրոցի վարչութեան դէմ. Բողոքին կողմնակից է յայտնւում Գագիկը, իսկ նորան հակառակում են ընկերները հետևեալ կերպով. «իմ կարծիքով, եթէ հէնց հաստատօրէն պնդենք, համոզենք,

որ իրանք ուսուցիչներն են մեղաւոր, ոչ մի օգուտի չենք կարող հասնել, ալ լաւ է, որ խոհեմութեամբ վարենք, սպասենք, կատարելագործենք, աւարտենք և այն ժամանակ աւելի հասունութեամբ կ'որոշենք՝ թէ ումն է մեղաւորութիւնը և ով արժանի կը լինի դատապարտելու... թէ չէ՝ կը վերցնեն, դուրս կանեն» և ալն։ Իսկ Գագիկը և իւր համախոհները այնուամենայնիւ բողոքում են և ինչպէս երևում է, դպրոցից արտաքսում են։ Ահա տասն տարի անցնելուց յետոյ դպրոցին «հնազանդ» գիւղացիները եկան գիւղը «մէկը անտառապետի հագուստով, միւսն՝ քննիչի։ Ամենն էլ աչքները պլցրած նրանց էին մտիկ տալիս...» Իսկ Գագիկը ոչինչ աստիճանի չէր հասել ու մնացել էր որպէս հասարակ գիւղացի, որը «մեծաւոր» ընկերներին տեսնելով վազ տուաւ իւր գլխին և ինքն իրան ասում էր. «աչքդ քուանա, բա չէիր լսած, թէ ով կարդա—նա մարդ ա»։ Հեղինակը կամենում է ցոյց տալ, թէ ինչ էլ լինի դպրոցը, ուսանողը պիտի չբողոքէ նորա դէմ, որովհետև՝հակառակ դէպքում նորան կ'արտաքսեն դըպրոցից և նա փոխանակ փալուն աստիճանաւոր դառնալու, կը մնայ հասարակ գիւղացի։ Ինչպէս ընթերցողը տեսնում է, վէպիկի սկզբնական գաղափարը թիւր է և ոչ գովելի։ Ճշմարիտ է ի հարկէ, որ առհասարակ բողոքողները, չենազանդողները, ինքնուրոյն բնաւորութիւն և մտածողութիւն ունեցողները շատ անգամ «բաղդի» չեն հանդում կեանքի մէջ, բայց և այնպէս նոցա ընթացքը աւելի համակրելի է, քան թէ չինովնիկ դառնալու համար ամեն ստորութեան դիմանողներինը։ Վէպիկը ցոյց է տալիս, որ հեղինակը կեանքը հետազօտելու և գրելու ձգտումներ ունի, միայն թէ այս անգամ փորձը խիստ անյաջող է։

Գաղափարական օրիորդը մի վէպ է, որի դեռ առաջին մասն է հրատարակուած։ Մի բարեսիրտ օրիորդ կամենում է իրան նուիրել ժողովրդի օգնութեան գործին, բայց թէ ուր կը հասցնէ իւր նպատակը, դեռ լայտնի չէ։ Ինչու համար է նորա միայն մի փոքրիկ մասը լոյս տեսել... չենք կարողանում մեզ բացատրել։

Ս. Թ.

ՄԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԽՆԴՐԻ ԱՌԹԻՒ

(Խորենացին Ուխտանէսի մօտ)

Հայագէտ պ. Կարիէրի մի նկատողութեան առթիւ («Հանդէս Ամսօրեայ» 1892 թ. №№ 8, 12) պ. Սա. Մալխասեանը մի յօդուած էր տպագրել «Մուրճ»-ի անցեալ տարուայ № 12-ում, որով աշխատում էր